Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Շ Ի Ր Ա Կ Ի  Մ Ա Ր Զ Ի  Մ Ա Ր Մ Ա Շ Ե Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 113

«22» դեկտեմբերի 2020 թվական                                   գյուղ Մայիսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ) 08-108-0027-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ 0.05733 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 01 ի N186-Ն հրամանով հաստատված <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի» 9-րդ կետի 5-րդ ենթակետը և հաշվի առնելով, որ համայնքի վարչական սահմաններում 08-108-0027-0001 կադաստրային ծածկագրից 0.05733 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և թույլ տրված անճշտության հետևանքով սույն համայնքին է փոխանցվել որպես <<անհայտ>> քաղաքացու սեփականություն, անճշտությունն ուղղելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում (բնակավայր՝ Վահրամաբերդ) 08-108-0027-0001 կադաստրային ծածկագրից 0.05733 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել համայնքի սեփականություն:

2.Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

3.Համայքնի ղեկավար Կարեն Արշակյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի Շիրակի մարզային ստորաբաժանում անշարժ գույքի նկատմամբ համայնքի իրավունքները պետական գրանցման ենթարկելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ա. ՋԱՔԱՐՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Պ. ՍԱՀԱԿՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Կ. ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |
| Զ. ՂԱՖԱՐՅԱՆ՝ | ------------------ | ------------------ | ------------------ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

«22» դեկտեմբերի 2020 թվական
գյուղ Մայիսյան